

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես Բազմ. 1923, էջ 94)

ԽԲ.

Նկարագրուած կրակը՝ որ տեղի ունեցած է ի Պոլիս՝ շատ աւելի համառօտ կը յիշատակուի նաեւ առ Մխթար հասած ուրիշ չորս թղթերու մէջ: Եւ որովհետեւ ասոնք ամբողջացումն են մեր հրատարակածին՝ զանց չենք ընել մէջ բերել հոս:

Անստորագիր նամակ մը այսպէս կ'ըսէ. « Այրեցաւ Ղալաթիայ սկսեալ ի Թօփ- « խանաէն մինչև ի Եանի խափուն, այսինքն ի Ս. Պետրոսն. հայոց ժամն, 4 յունաց « ժամ, ճէզուիթաց, քափուչինից, տօմինիգանից, այրեցան յուլիսի 10: Բայց բերբէն « ի դուրս ոչ կարաց ելանել կրակն, ուստի քնացին տունը.. և այլոց ամենայն « հրէից մինչև ի եաղ խափանին զըսդին և անդէն շիջան: Եւ այսքանս այրեցաւ « ի 6 ժամն ի սաստիկ բռնութենէ հողմոյն » (գր. 1731 յուլիս 10):

Հ. Թովմաս վարդապետ կը գրէ. « Ի Թօփուսնային կողմէն սկսաւ հրդեհումն « ի յուլիս 10, և այնքան տարածեցաւ՝ զի բոլոր Ղալաթիայ գրեթէ ի մօխր դար- « ձաւ.. բոլոր եալուն զերծաւ... Բայց ի մէջ Ղալաթիու... ճէզվիթաց վանքն և « ժամն, հայոց ժամն, Ս. Գեորգիայ ժամն, Ս. Պետրոսի ժամն և այլք բնաւք տունք « կիզեցան (բաց ի փէրշէմպէ պազարիէն) մինչև ի Ղուլէղարուն պարիսպն » (գր. 1731 յուլիս 21):

Իսկ Հ. Պ(օղոս) վարդապետ երկու նամակներ ունի, ուր կը յիշուի այդ հրդեհը: Առաջինոյն մէջ (անտարակոյս՝ վրիպմամբ) կը նշանակէ տարբեր թուական մը կրակի օրուան, այսպէս. « Ի յուլիսի 26, ի յարտաքոյ զրանէ Թօփիանու եմուտ « ի Ղալաթիաց հուր մի մեծ, որ հրդեհեաց զամենայն եկեղեցիքն և զամենայն տունս « և արտաքոյ պարսպի եղեալքն, այսինքն ի սիրքէնի իսկէլէէն մինչև ի Պալք « պազարին, ոչ այրեցան, (գր. 1731 օգոստոս 3 ի Սամաթեայ):

Երկրորդ թուղթը հետեւեալ երկտողն ունի՝ ինչ որ այլը չունի. « Ի հրկիզութեան Ղալաթեայու՝ եկեղեցին իւրեանց [Գոմինիկեանց] աւերեցեալ էր ի զինուորաց տաճկաց, այժմ բովանդակ բլուցեալք ինքեանք զեկեղեցին և զամենարանն իւրեանց նորոգապէս սկսան շինել. (գր. 1731 նոյեմբեր 1):

Հ. Թովմասի և Հ. Պօղոսի յիշեալ նամակները Պօլսէն զրկուած են:

Գերամեծարեղի ի սրտե սիրեցեալ Հօր մերում
և սիրելի եղբորս իմում տեւան տեւան
Պետրոս Աստուածաբանութեան վարդապետիս
ամենեքեանս մեծ և փոքրը:

... Թվին Հայոց 1180 յուլիսի 9 ուրբաթ գիշեր սահաթը 6 ու կէսին կրակ եղաւ. Թօփիանային զըսդին էրեցաւ. խանտէկին մէջի տէյրմեններուն դիմացի տներն, խա- նութներն, սալախանանք էրեցաւ. քամին սաստկացաւ, տէյրմեններուն վրայէն կրակն

ներս մտաւ. չուխուր օտաւարն վարը քովի խաֆաֆներն ըսկըսեց այրել, քամին եւ առաւել սաստկացաւ. ետո հայոց ժամն, քիրէն խափուն, էյրի խափուն, հոռոններուն չորս ժամն հանդերձ տներովն, տայրիին տուն, ֆոռանկաց Եկեղեցին, քէմէրալի մոմխանան խուռ, չուլու մաղազային տկերովն սիմայ քովերցտ իստած տունը... ետո մեր խնդն ողորմելի տունն... — աստուծոյ ողորմութեամբ վնաս մի չեղաւ խառաքոյն մինչեւ պալիսպարը. վերի կողմը սուրբ Գեվորգա եկեղեցի էրեցաւ. Ս. Պետրոս եկեղեցին քաջքայեցին, կրակն մարեցաւ, խանութին փնաս չէղաւ, շափաթ լուս սահաթը Ենն մարեցաւ. դուրսի կողմը եալընեբուն փնաս մի չէղաւ. հէնի ճամփին քովէն մինչև թօփխանային դուռը պարսպպին տկերովն մէկ տուն մի չմնաց այսպէս իմանաս... Գուլիսի 6էն մինչև գիր գրեալ ժամանակս էրկու իրէք հարուր տուն խանութ չին վեցաւ անթիվ...:

Նվաստ ծառայ քո

Տիրացու Վարդան և որդի իմ

Պետրոս

Գրեցաւ գիրս Հայոց թվին
1180 [= 1731] սեկտեմբեր 9

ԽԳ.

Աննշան տեղեկութիւններ չէ որ կը հաղորդուին հետեւեալ բազմանիւթ նամակին մէջ. Հիմնադրիս պատմութենէն ծանօթ է որ 1718էն ի վեր՝ Աւստրիացոց զրաւած աշտօրուան Պեղիբատ քաղաքը՝ Միխիթարայ աշակերտաց առաւելակաւ գործունէութեան զխաւոր կեդրոններէն մին դարձած էր. Հ. Եղիա կը յաջորդէր Ստեփանոս և Բար. Ղուկիմէոս անուամբ երկու հայ վարդապետներու, որոնցմէ զոհ չէր եղած ո՛չ ժողովուրդը, ոչ Ս. Աթոռը:

Շատ հետաքրքրական են թղթիս մէջ նկարագրուած ազգային սովորոյթներն ու բարքերը:

Գեորգայրդեցեղոյ և վսեմագունի տեսուն տեաւմ
Միխիթարայ Աբրայ Հօրն մերում

Յիսուսաւանդ ողջունիւ և բազմաւ կարօտիւ յայտ լիցի, զի յամսհանն յուլիսի 31եր. որդի աւուրն չունալ ի վէնայու, ի օգոստոսի ամսոյն 11, բարւոք և խաղաղութեամբ հասաթ ի Պէլկրատ և ի հասանէլն իմ աստ՝ Վնդ ումմն անձի ազգ արարի Ճանադի. զին, զի եկեցեցէ աստ առ իս, այսինքն ի նաւն, Եւ իբրեւ եհաս լուրն առ նոսա, իսկոյն հկին ոմանք, և իբրեւ գծարաւիս առ աղբիւրս հոգևորի ջրոյ՝ սիրով մեծաւ վերքեկալան զիսուստութիւնն իմ, և վաղվաղակի վերագրեալ անձն պատրաստեաց ի տան իւրում զխոց մի, և յոյժ ուրախ եղև ժողովուրդն վասն զալստեան իմոյ ասելով, թէ ահաւ. սիկ ի վաղուց հետէ սպասէաք այցելուի: Եւ յետ խօսակցութեանց բազմաց զնացաք ընդ տէջ Մանուէլին առ վիգարին տեղույս, և մատուցա՞ք իմա զգիրն սրբոյ ժողովոյն, նունցին և եպիսկոպոսին. և մինչ նա ընթերցաւ զգիրն եպիսկոպոսին ասաց ազգ առնել հայոց, զի յեկեղեցիս իւրեանց հաւաքեսցին, և ես փութով եկեալ ծանուցից ժողովրդեանն և յանձնեցից քեզ զեկեղեցին, և արար այնպէս ըստ որում ասաց, և յոթմամ նա եկն ի յեկեղեցին հայոց՝ ունէր ընդ իւր զմի քանոնիք՝ և զսէկրիթարն եպիսկոպոսին, և

1. Ռէյմոնտոս անուամբ, ինչպէս այլուր յիշատակուած է:



զգրեանս իմ առաջի ժողովուրդեանն ընթերցաւ, և ասաց նոցա թէ սա է հովիւն ձեր և պարտիք նմա հպատակել... Իսկ ի յերկրորդում աւուրն գնացաք առ մարտէզ ֆոթան, որ է յոյժ անուանի և է փոխանորդ բրինձին և ճէնուպին, զի սոքա ոչ են աստ այլ ի վէնա... Եւ յետ այսորիկ գնացեալ գտաք զՅովհաննէս եպիսկոպոսն, որ է Ժիր և առողջ, և ոչ նստի ի տան իւրում, այլ շրջի այսր և անգր, և ըստ մեծն մասին ուտէ ի տան մեծամեծաց, թէ ի մէջ հայոց և թէ ի մէջ ֆռանկաց, ոչ ունի զկեղտ անուն... Իզմիրբի տէր Մանուէլն ասաց ինձ. լաւ է որ յաւուր վերափոխ(մ)ան Աստուածածնայ պօնսրիւնեօրն թագիւ պատարագիցէ... նա և մի տիրացու եցոյց ինչ զտետրակ մի սահելով, թէ զտոյն երգս եպիսկոպոսն է շարադրեալ՝ փոխանակ Առաւօտ լուսոյին, զնա ևս արգիլեցի: 3, 4 տիրացու ունին, որոց մինն անձմ և ծնացեալքն են տեղացի, սոքա ամենեքեան լաւ ձայն ունին, սակայն այնպէս պոռան, որ ոչ երբէք ուրեք տեսեալ էի... զձայնաւոր պատարագն և փառք ի բարձունն ծնծղայիւք և զանկակօք առնեն, աստ է համբերելի և տանելի, երկայն շուրջառով, երկայն շապկով առնեն թէ զթիւ պատարագն և թէ զձայնաւորն... Ժողովուրդն միայն յաւուր կիրակէի և տօնի գան յեկեղեցին, այն ևս յառաւօտն և ոչ յերեկոյն, երբեմն լցաք առաւօտուէն սկսին, երբեմն փառք ի բարձունէն, և երբեմն Տէր զի բազումն... 35 տուն հայք գոն աստ, 25 ևս պէքեառ... Հայոց տունն ոմն այս ինչ և ոմն այն ինչ տեղի, ոմանք կարի յոյժ հեռի են ի յեկեղեցւոյ. ամառն թօզ, և ձմեռն սաստիկ չամուռ լինի..... տեղւոյս կանայք խիստ բաց են, թէ արք և թէ կանայք խիստ գինեսէր են, նա և առանց ջրոյ ըմպին զգինին, դառբուզով, լոկ սեխով, պոռկով, խըլարով, և ոչ հացով գինի և ռախի խմեն: Պատրոց վանքն գնացաք և խըլարէ թուռչի տեսաք, պարզ գինի տուին և մէզէյի տեղ հաց տուին, հացն մանտրեն և ի վերայ հացին աղ ձանեն և իբրև մեզէ մատուցանեն. խիստ բռնադատեն զմարդն, ջրով խմել չեն գիտեր, խըլարէ սալաթն կուտեն և ապա ռախին խմեն: Զկերակուրն ևս շատ կուտեն, ես միայն ըստ մարգարէին ջրով խմեմ, 3 մարդոյ ուսուցի ջրով խմել, որոց մինն կարի յոյժ տկար էր, հագիւ ի գիշերի 1 սահաթ ննջէր, կերակուրն և գինին կարգադրեցի, թէ այսպէս կեր և այնպէս խմէ, այժմ ուտէ և բարւոք ննջէ. կերակուր ուտել ևս չեն գիտեր, այս շողոյս (?) ի մէջ կերակրին ահագին աղ, պիպէտ, սղտոր, սոխ ղնեն.....

Նուաստագոյն ծառայ
եղիս վարդապետ

Յամի տեառն 1732

յօգոստոսի 23

[Պեկրատ]



Հ. Ղ. ՏԱՅԵՆ

